ԱՄՆ-Ի ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՊԱՍՏԸ ԿԻԼԻԿՅԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ (1916–1920 ԹԹ.)

(1918 թ. Արարայի ճակատամարտում “Հայկական լեգեոնի” տարած հաղթանակի 100-ամյակի առթիվ)

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Առաջին աշխարհամարտի ընթացքում (1914–1918 թթ.) և դրան հաջորդող տարիներին առավելապես առաջին սերնդի ամերիկահայերի համար հայրենի ժողովրդի սատարմանն ուղղված ջանքերը եղել են գործնական ու ծանրակշիռ՝ կրելով թե՛ քաղաքական ու դիվանագիտական, և թե՛ հասարակական, տնտեսական ու ռազմական բնույթ: Վերջինս արտահայտվել է ռազմամթերքի, դրամական միջոցների, նաև՝ մարդկային ուժի՝ կամավորների առաքումով, որն իրականացվել է, գլխավորապես, հայկական կուսակցությունների ու կազմակերպությունների կողմից:

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո Կովկասում, ապա՝ Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ սկսած 1915 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվներից 1918 թ. Արարայի հերոսամարտը՝ ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք կողքի քաջաբար մարտնչելով գերմանա-թուրքական ուժերի դեմ[1]: Կամավորական շարժման նշանաբանն էր՝ “Ինքնավարութիւն վեց վիլայէթներու և անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ”[2]:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները, Փարիզի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի մասնակցությամբ, Լոնդոնի ֆրանսիական դեսպանատանը համատեղ համաձայնության էին եկել (Սայքս-Պիկոյի համաձայնություն)՝ ստեղծել հայ, ինչպես նաև արաբ (սիրիացի, ալժիրցի, մարոկացի և այլ)[3] կամավորներից բաղկացած ու “օսմանյան իշ-

---

[1] *Ք. Ա վ ա գ յ ա ն. Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 114–119:*

[2] *Ջ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914–1916 թթ.), Երևան, 1965, էջ 187, Գ. Լ ա զ ե ա ն. Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942, էջ 81:*

[3] Forgotten Heroes. The Armenian Legion and the Great War. An Exhibit Commemorating the 83rd Anniversary of the Armenian Legion’s Victory on September 19, 1918, at Arara (Palestine).

խանությունների նկատմամբ չեզոք"՝ "Արևելյան լեգեոն" ("Lոgion d'Orient") *անվանումը կրող զորամիավոր, որը, իբրև օժանդակ ուժ, պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում պետք է կռվեր բացառապես Ասիական Թուրքիայի մաս կազմող Սիրիայում և Կիլիկիայում, այնուհետև՝ թուրքերի դեմ հաղթանակից հետո, որպես քաղաքապահ ուժ (միլիցիա), ապահովեր ֆրանսիական հոգատարության ներքո Կիլիկիայի ինքնավարությունը: "Արևելյան լեգեոնի" կազմակերպման ծախսերն իր վրա էր վերցնելու ֆրանսիական կառավարությունը, որը հոգալու էր կամավորների տեղափոխման ճանապարհածախսը, հիվանդության ու հաշմանդամության ծախսերը: Կամավորները, որոնք պետք է ներկայացնեին լավ վարքի վկայական, մարզվելու և ղեկավարվելու էին ֆրանսիական սպաների ու ենթասպաների կողմից, վարձատրվելու էին ֆրանսիական զինվորների նման, ստանալու էին նույն պարենը, ինչ ֆրանսիացի զինվորը: Լեգեոնը սկզբնապես հաստատվելու էր Կիպրոսում (Ֆամագուստա նավահանգստից 40 կմ հեռավորության վրա գտնվող Մոնարկա ծովեզրյա սարահարթային վայրում, երբեմնի Լևոն V կիլիկյան թագավորի գերեզմանի մոտ)[4], որտեղ ժամանելու էին Մարսելի, Բորդոյի և Պորտ-Սայիդի գրասենյակներում գրանցված տարբեր վայրերից ժամանած հայ կամավորները: Սայքս-Պիկոյի համաձայնագրի մեջ նշված էր. "1. Որ կամաւորները ո՛չ Ֆրանսական, ո՛չ ալ Եւրոպական ուրիշ ճակատներու վրայ պիտի կռուին, այլ միայն ու միայն Ասիական Թուրքիոյ մէջ պիտի գործածուին՝ իրենց դարաւոր թշնամիին դէմ պատերազմելու եւ ազատագրելու իրենց մայրենի հողը: 2. Որ՝ Ֆրանսա, Դաշնակիցներու յաղթանակէն յետոյ, պիտի նուիրուի Կիլիկիոյ ինքնավարութիւն ապահովելու գործին, իր հոգատարութեան ներքեւ"[5]:*

1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել է օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված "Արևելյան լեգեոնը": Կամավորագրումը սկսվել է Եգիպտոսում, որի կորիզը կազմել են 600 մուսալեռցի (ֆրանսիական կառավարութ-

---

September 23-December 31, 2001. Prepared by B. Merguerian (ALMA) (*այսուհետև՝* Forgotten Heroes), Watertown, 2001, p. 8.

[4] *Խ. Ա Ճ է մ ե ա ն Ք հ ն յ.. Հայկական Լէգէոնը.– □Համազգային□ի տարեգիրք 1953, Պէյրութ, 1952, էջ 72:*

[5] *Մ. Գ. Ճ հ զ մ է Ճ ե ա ն. Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890–1925), Ֆրէզնօ, 1930, էջ 345, Տ. Յ. Պ օ յ ա Ճ է ա ն. Հայկական Լէգէոնը. Պատմական յուշագրութիւն, Ուօթրթաուն, 1965, էջ 8–10, 13:*

յան աջակցությամբ Պորտ-Սայիդում ապաստանածներից)[6], ապա նաև՝ 300 եգիպտահայ, ինչպես նաև՝ օսմանյան բանակից ու այլ վայրերից փախստական 236 հայ[7]:

Համայն հայության բարոյական, քաղաքական, նյութական կարողությունները համախմբելու, Հայ դատին ի նպաստ ազգային և միջազգային գործունեություն կազմակերպելու, ֆրանսիական հրամանատարության ներքո արևմտահայության շրջանում ծավալված կամավորական շարժումը կանոնավորելու ու նպատակաուղղելու, հայանպաստ այլ ձեռնարկներ իրականացնելու և վերահսկելու հատուկ միտումով 1917 թ. սկզբին Եգիպտոսում ստեղծվել էր ազգային հիմնական կառույցները (կուսակցական, եկեղեցական, բարեսիրական) համախմբող՝ "Հայ ազգային միություն" անունով կենտրոնական մարմին, որը շատ կարճ ժամանակում իր մասնաճյուղերն է հիմնել տարբեր հայաշատ գաղութներում:

Այդ նպատակով, Պ. Նուբարի հանձնարարագրով մարտի սկզբին ԱՄՆ է առաքվել ազգային երեք կուսակցությունը ներկայացնող պատգամավորություն (Ստեփան Սապահ-Գյուլյան՝ ՍԴՀ-ից, Արտաբաստ Խաչիկ Հանըմյան՝ ՀՅԴ-ից, Միհրան Տամատյան՝ ՀՍՌ-ից), որը, միաժամանակ, գնացել էր "ձեւ ու մարմին տալու համար կամաւորական շարժումին"[8]:

Կամավորագրումը մեծ ոգևորություն է առաջացրել ամերիկահայության շրջանում, քանի որ օվկիանոսից այն կողմ գտնվող այս գաղութը ևս "... կ'ալեկոծէր հայրենի հողերու ազատագրական շունչով" և "Ամերիկահայ երիտասարդութեան սիրտը կ'եռար արդէն եւ նման առիթ մը կը փնտռէր իր անտանելի դարձած սուգին վրէժն առնելու և հայ ազատագրութիւնը դարբնելու համար"[9]:

Եգիպտահայ պատվիրակության ջանքերով և համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսևորած բարձր գիտակցության շնորհիվ հնարավոր է դարձել 1917 թ. մարտի 16–26-ը Բոստոնում անցկացնել չորս կուսակցության միջև համերաշխության բանակցությունների յոթ նիստ, որոնց ընթացքում էլ կազմակերպվել է Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ): Միությունը բաղկացած էր չորս կուսակցության (Սոցիալ դեմոկրատ հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Հայ հե-

---

[6] Ռ. Գ. Սահակյան. Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919–1921 թթ., Երևան, 1970, էջ 115–116:

[7] Յուշամատեան Մուսա Լէրան, խմբ.՝ Մ. Գուշագճեան, Պ. Մատուռեան, Պէյրութ, 1970, էջ 426, Օ. Թ. Մալխազունի. Ամերիկահայ կամաւորները եւ իրենց յաղթանակը.– □Արագած□ (շաբաթաթերթ), թիւ 12, Ապրիլ 12, 1919, էջ 172, Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 116:

[8] Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 344, Յուշամատեան Մեծ Եղեռնի, 1915–1965, խմբ.՝ Գ. Ահարոնեան, Պէյրութ, 1965, էջ 895:

[9] Յուշամատեան Մեծ Եղեռնի, 1915–1965, էջ 895, Վահէ Հայկ. Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 994:

ղափոխական դաշնակցություն, Հայ սահմանադիր ռամկավար), ազգային երկու եկեղեցու (առաքելական, ավետարանական) և Հայկական բարեգործական ընդհանուր միության ներկայացուցիչներից: Ընտրվել էր միության 18 անդամից բաղկացած կենտրոնական մարմին (ատենապետ՝ Միհրան Սվազլյան)[10]:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ կուսակցությունները (մասնավորապես՝ ՀՅԴ-ն), միասնականություն էին հանդես բերել ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել էր միության 187 մասնաճյուղ: Ամերիկայի հայ ազգային միության նպատակն էր ամերիկահայ նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի ու Կիլիկիայի ազատագրմանը, վերաշինությանը և կարոտյալների անմիջական օգնությանը, ինչպես նաև՝ ԱՄՆ-ում հայանպաստ պրոպագանդա ու դիվանագիտական ձեռնարկներ իրականացնել[11]: Միության հասույթը ձևավորվում էր անդամավճարումներից, հանգանակություններից, նվիրատվություններից: Այն իր գործունեությունը համաձայնեցնում էր Փարիզի Հայ ազգային պատվիրակության հետ՝ հանդիսանալով նրա լիազոր ներկայացուցչական մարմինն ԱՄՆ-ում[12]:

Հմուտ դիվանագետ, ազգային, հասարակական, քաղաքական գործիչ, իրավաբան, հրապարակախոս Միհրան Սվազլյանի ղեկավարած Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համազգային, մինչև անգամ միջազգային ու, հատկապես, ամերիկյան կառավարական և հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում[13]:

Արևմտյան Հայաստանի ազատագրության նպատակով Ամերիկայի հայ ազգային միության իրականացրած "առաջին եւ ամենանուիրական"[14] գործերից մեկը եղավ ԱՄՆ-ում կամավորական շարժման կազմակերպումը: Ինչպես ասվեց, այն մեծ

---

[10] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917–1921 թթ., Պոստոն, 1922, էջ 11–12, Սահմանադրութիւն եւ կանոնագրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պոսթօն, 1917, էջ 2, 19–20, Թ է ո դ ի կ. Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 286:

[11] Ք. Ա վ ա գ յ ա ն. Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում.– □Հայոց պատմության հարցեր□, Երևան, 2003, թիվ 4, էջ 98–104, Մ. Գ. Ճ ի զ մ է ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 353:

[12] Մ. Գ. Ճ ի զ մ է ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 352, Սահմանադրութիւն եւ կանոնագրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 1–2:

[13] Ք. Ա վ ա գ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 98–104:

[14] Տ. Յ. Պ օ յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 37–38:

խանդավառություն էր առաջ բերել գաղութում, մանավանդ որ 1917 թ. սկզբին ԱՄՆ-ն արդեն դադարեցրել էր իր չեզոքությունը և ներքաշվել Առաջին աշխարհամարտին. "Հազարաւորներ կը ձգէին հանգիստ աշխատանք ու գրասեղան, ապահով կեանք ու փայլուն ապագայ՝ զօրացնելու համար կորիզը "հայկական բանակին"[15]:

Համաձայն Փարիզի Հայ ազգային պատվիրակության և ֆրանսիական կառավարության միջև կայացած պայմանավորվածության՝ ամերիկահայ կամավորները Նյու Յորքից Բորդո պետք է մեկնեին ֆրանսիական փոխադրանավերով ու Ամերիկայի հայ ազգային միության ծախսով: Բորդոյում ֆրանսիական զինվորական ղեկավարության քննությունն անցնելուց հետո նրանց պետք է արձանագրեին ֆրանսիական հրամանատարության ներքո կռվելու համար: Իսկ դաշնակից տերությունների համար պատերազմի բարենպաստ ավարտի դեպքում Կիլիկիայի պաշտպանությունն անցնելու էր հայ զինվորականությանը[16]:

Շարժման մասնակից Տիգրան Պոյաճյանի վկայությամբ, "Արտակարգ խանդավառութիւն ստեղծած էր հայ կամաւորներով բանակ կազմելու ծրագիրը: Արձանագրուողներու թիւը ամէնուն ակնկալութենէն ու երեւակայութենէն բարձր եղաւ: Հազարաւորներ տրամադրութիւն ցոյց տուին կռուի դաշտ վազել, իրենց նահատակ արիւնակիցներու վրէժը լուծելու անզուսպ յուզումով"[17]:

Կարճ ժամանակում՝ ընդամենը հինգ ամսում (1917 թ. հունիսի 9– նոյեմբերի 3), ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով արձանագրվել է 5.000 ամերիկահայ, սակայն, հակառակ ամերիկահայության շրջանում ստեղծված աննախադեպ խանդավառության, ֆրանսիական հրամանատարության տրամադրած փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն է ընձեռվել ընդամենը 1.172-ին (նրանցից վերապրել է ընդամենը 250 հայ)[18], իսկ մնացյալը հետագայում զինվորագրվել է ԱՄՆ-ի բանակին՝ կռվելով Գերմանիայի դեմ արևմտյան ճակատներում[19]:

Ականատեսների վկայությամբ, ամերիկահայերը, ոգևորված օր առաջ կամավորագրվելու նախանձախնդրությամբ և չսպասելով Ամերիկայի հայ ազգային միության կամավորներով համալրելու պարբերական հրավերներին, ժամանակից շուտ

---

[15] *Մ. Տամատեան. Իմ յուշերէս, խմբ. եւ ծանօթ.՝ Վ. Ղազարեան, Պէյրութ, 1985, էջ 114, Յուշամատեան Մեծ Եղեռնի, 1915–1965, էջ 891:*

[16] *Տ. Յ. Պոյաճեան. նշվ. աշխ., էջ 38:*

[17] *Նույն տեղում, էջ 37–38:*

[18] A. S. Yeretzian. A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles. A Thesis. California, 1923, p. 11.

[19] *Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917–1921 թթ., էջ 27, Պ. Յ. Տեփոյեան. Միհրան Տամատեան (1863–1945), Գահիրէ, 1956, էջ 196:*

թողնում էին իրենց աշխատանքն ու հանգիստը և մեկնում Նյու Յորք՝ տեղում սպասելու իրենց հերթին: Մինչդեռ ֆրանսիական խոշոր շոգենավերը տրամադրվում էին ամերիկյան զինվորների փոխադրմանը, իսկ ամերիկահայ կամավորների տեղափոխման համար մեկ-երկու մեծ փոխադրանավ տրամադրելու փոխարեն հատկացվում էր շաբաթական ընդամենը մեկ անգամ յոթ-ութ տասնյակ 3-րդ և 4-րդ - կարգերով ուղևոր փոխադրող ոչ բավարար տարողության բեռնակիր նավ: Արդյունքում, հինգ ամսում 17 նավով փոխադրվել է կամավորագրված ամերիկահայերի միայն 1/5 մասը:

1917 թ. ապրիլի 6-ին Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ի ներքաշումով, ինչպես նաև ելնելով ֆրանսիական իշխանությունների կողմից հարուցած փոխադրական դժվարություններից ու սահմանափակումներից, դադարել է հայ կամավորների առաքումը Ֆրանսիա, ուստի կամավորագրված, սակայն չընդգրկված ամերիկահայ երիտասարդներն իրենց ողջ ուժն ու կարողությունը ծառայեցրել են նաև հանուն որդեգրած երկրի պաշտպանության՝ անդամագրվելով դաշնակցային զինված ուժերի շարքերը: Նրանցից շատերը մեկնել են ֆրանսիական՝ արևմտյան ճակատ՝ կռվելու ընդդեմ Գերմանիայի[20]:

Մինչդեռ ֆրանսիական բանակ կամավորագրված ամերիկահայերի նպատակը ոչ թե ֆրանսիական ցանկացած ճակատում կռվելն էր, այլ իրենց հայրենիքի ազատագրման համար պայքարելն էր: Այդ կապակցությամբ, "Արևելյան լեգեոն" կամավորագրված ամերիկահայ լեգեոնականի հետևյալ խոսքերը բնորոշում են ԱՄՆ-ից կամավորագրված հայերի շրջանում առկա ընդհանուր տրամադրությունը. "Մենք ձգած էինք Ամերիկան մեր ազգի ոխերիմ թշնամին դէմ կռուելու համար, ոչ թէ Եւրոպական ճակատներու վրայ: Եթէ այդ պատեհութիւնը պիտի զլացուէր մեզի, բնականաբար պիտի նախընտրէինք Ամերիկեան բանակին մէջ ծառայել"[21]:

Մեծ մասամբ քեսապցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսեյնիկցի այդ երիտասարդները ներառում էին ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները (օրինակ՝ միայն Մասսաչուսեթսի նահանգից՝ 424 կամավոր, ընդ որում՝ շուրջ 1.000 հայ ունեցող Լուորենս քաղաքից՝ 78, Ուստրից՝ 76, Բոստոնից՝ 6)[22]: Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ[23]: Պետրոս Տեփոյյանի բնորոշմամբ, "Ամերիկահայեր իրենց խորքին մէջ մէկ քանի տասնեակ տարիներով կուսակցական ճիգերու շնորհիւ պատրաստուած

---

[20] *Մ. Տ ա մ ա տ ե ա ն. նշվ. աշխ., էջ 115, Տ. Յ. Պ օ յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 38:*

[21] *Տ. Յ. Պ օ յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 44:*

[22] *Յուշամատեան Մուսա Լերան, էջ 426,* The Armenians in Massachusetts. Boston, 1937, p. 54.

[23] *Տ. Յ. Պ օ յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 86:*

բարձրորակ հայրենասէրներ էին: Անշուշտ ազատ ապրելու և մտածելու միջավայրը իր մեծ նպաստը բերած էր այդ հայրենասիրութեան դիեցման աշխատանքին մէջ"[24]:

"Արևելյան լեգեոն" կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև ամերիկյան բանակի մի շարք բարձրաստիճան զինվորականներ, որոնք տարբեր աստիճաններով են ծառայել լեգեոնի կազմում (հրամանատարներ Ջիմ Չանգալյան՝ կրտսեր ենթասպա–հիսնապետ, Հայկ Ազատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն Հերյան՝ կրտսեր ենթասպա–տասնապետ, Գարակյոզյան՝ տասնապետ, Վահան Չուրկենց, Վաղարշակ վրդ. Արշակունի, Ջոն Շիշմանյան՝ տեղապահ և այլք)[25]:

Ամերիկայի հայ ազգային միության ներկայացուցիչ Ռ. Հերյանն անձամբ է մասնակցել ամերիկահայ կամավորների ինքնության փաստաթղթերի պատրաստմանը Նյու Յորքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնասրահում: Կամավորագրված ականատես Տ. Պոյաճյանի վկայությամբ, "Եկեղեցւոյ սրահը տեսակ մը ուխտատեղի դարձած էր: Իւրաքանչիւր կամաւոր, Աստուծոյ տան մէջ, իւրովի եւ անձայն կը մրմնջէր աղօթք մը եւ խնդրանք մը ուղղուած Հայուն Աստուծոյն որ զինք ապահով առաջնորդէր մինչեւ կռուի ճակատ, ուր ինք պատրաստ էր իր կեանքը ի սպաս դնելու հայ ժողովուրդի ազատագրութեան սուրբ դատին"[26]:

Նախնական ծանոթություններից, խրատ-մաղթանքներից հետո տեղի էր ունենում կամավորների ողջերթն ու կանոնավոր առաքումը: Խրախուսող-խանդավառող խոսքեր են ասել կովկասյան կամավորական շարժման մասնակիցներ Խանը (Մանուկ Պաղտասարյանը), Ջ. Չանգալյանը և այլք՝ "ոմանք զսպուած արցունքներով, ուրիշներ հռետորական, խանդավառ եւ ոգեւորիչ"[27]: Տպավորիչ էր 1917 թ. օգոստոսի վերջին մեկնող կամավորների խմբին ուղղված Մուշեղ Շահինյանի (հետագայում՝ նահատակ) ողջերթի խոսքը [ավելի ուշ՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին, այն տպագրվել է նաև Բոստոնի "Պայքար" օրաթերթի (7 օգոստոսի 1943 թ.) էջերում՝ ոգևորության, հույսի և ներշնչումի ալիք բարձրացնելով ամերիկահայերի շրջանում]. "Ով Հայ Կամաւորներ, հայոց գերեալ հայրենիքը, Հայաստան, հինգ հարիւր տարիներէ ի վեր է որ ձեր գալստեան կը սպասէ: Եղէք քաջ ու կորովի: Ազգը գերագոյն յոյսերով զձեզ ճամբու կը դնէ: Դուք հայ ազգին զինուորներն էք: Ազգն անխռով ու մեծ հաւատքով կ'աղօթէ ձեր գործին կատարեալ յաջողութեան համար: Մեր նախահարց դիւցազնական ոգիներու ներշնչմամբ (քալեցէք) յառաջ, դէպի յաղթանակ: Կրնաք վստահ ըլլալ որ ձեր սխրագործութիւնները նոր

---

[24] *Պ. Յ. Տ ե փ ո յ ե ա ն. նշվ. աշխ., էջ 186:*

[25] *Յուշամատեան Մուսա Լեռան, էջ 428, Ս. Պ ա ր թ ե ւ ե ա ն. Արարա. Հայկական Լեգէոնը, Աղեքսանդրիա, 1919, էջ 88, 102:*

[26] *Տ. Յ. Պ օ յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 38–39:*

[27] *Նույն տեղում, էջ 39:*

կեանք, նոր ոգի պիտի արթնցնեն մեր ժողովուրդին մէջ: Ձեր վահանովը կամ ձեր վահանին վրայ վերադարձէք: Երթաք բարեաւ"[28]:

Ամերիկյան բարեկեցիկ ու հանգստավետ կյանքին ընտելացած հայ երիտասարդների համար այնքան էլ դյուրին չէր համակերպվել դժվարություններով և զրկանքներով լի զինվորական կյանքին ու կենցաղին: Այդ մասին են վկայել 1917 թ. հուլիսի 9-ին ֆրանսիական "Լ'Էսփանի" շոգենավով Նյու Յորքից Բորդո մեկնած մի խումբ լեգեոնականներ. "Առաջին վայրկեանէն իսկ, հակառակ մեր խանդավառ տրամադրութեանց, դժգոհելու մէկէ աւելի պատճառներ ունեցանք: Նաւուն ներքնայարկերէն մէկուն մէջ, խճողուեցան մեր տղաքը, անբացատրելի աղտոտութեամբ եւ նեխածութեամբ շրջապատուած: Կարելի չէր ըմբռնել այդքան անհոգութիւն եւ անխնամութիւն ոեւէ պատասխանատու նաւավարի մը եւ նաւաստիներու մօտ: Ուտելիքը վատ էր եւ անբաւարար, եւ զայն բարելաւելու ոչ ոքի մտքէն կ'անցնէր"[29]: Այդուհանդերձ, ամերիկահայ կամավորներն "... ամէնքն ալ գիտէին որ արծաթեայ մահճակալներ եւ թաւշեայ անկողիններ պիտի չհրամցուէին իրենց"[30]: Նրանք Բորդոյում մնում էին մոտ մեկ շաբաթ, ապա բեռնակիր շոգեկառքի բացօթյա կառաշարերում խցկված շարժվում էին դեպի Մարսել, ուր, տեղավորվելով որպես զինվորական բարակներ ծառայող բժշկական վարժարանում, ստանում էին համազգեստ, ներքնազգեստ, կոշիկ և անհրաժեշտ այլ իրեր, ապա մեկ շաբաթից նորից ճամփա էին ելնում դեպի Եգիպտոս՝ Պորտ-Սայիդ[31]:

Հայ կամավորներ փոխադրող ֆրանսիական նավերը Միջերկրական ծովում զերծ չեն մնացել թշնամական հարձակումներից: Այսպես, 1917 թ. օգոստոսի վերջին Մարսելից Պորտ-Սայիդ 80–85 հայ կամավոր փոխադրող ֆրանսիական "Ամիրալ Օրլի" նավը, հունական կղզիների մոտ ենթարկվելով գերմանական ընդծովայիններ-ի հարձակմանը, ընկղմվել է: Ամերիկահայ լեգեոնականներն առանց խուճապի մատնվելու ջրի վրա են մնացել այնքան ժամանակ, մինչև որ անգլիական ռազմանավերն օգնության են եկել՝ նրանց փոխադրելով Կրետեի մոտ գտնվող Միլոս կղզի, ապա՝ Պորտ-Սայիդ[32]: Ժամանելով Պորտ-Սայիդ՝ նրանք միացել են ֆրանսիական նավերով այդտեղ փոխադրված Մուսա լեռան հերոսամարտում թրծված սվեդիացի երիտասարդներին, ինչպես նաև՝ անգլիացիների կողմից որպես թուրք զինվոր գերված ու Եգիպտոս փոխադրված տաճկահայ զորակոչիկներին և դասալիքներին: Ընդհանուր առմամբ, շուրջ 3.000 հայ կամավոր 1917 թ. հոկտեմբերին ուղարկվել է

---

[28] *Նույն տեղում, էջ 39–40:*

[29] *Նույն տեղում, էջ 41:*

[30] *Նույն տեղում:*

[31] *Նույն տեղում, էջ 45:*

[32] *Նույն տեղում, էջ 48, 50, Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 355, Խ. Ամէմեան Քինյ.. նշվ. աշխ., էջ 73–74, Յուշամատեան Մուսա Լերան, էջ 417:*

Կիպրոս մարզվելու[33] ("Արևելյան լեգեոնի" հիմք հանդիսացած մուսալեռցիներն այդտեղ մարզվում էին արդեն սկսած 1916 թ. նոյեմբերից, որոնց հետագայում միացել են նաև եգիպտահայերը)[34]:

Այնպես որ, ամերիկահայ կամավորագրվածները նախնական վարժանք էին անցնում Փաթերսոնում (Նյու Ջերսիի նահանգ), գրանցվում՝ Նյու Յորքում, ապա նավով մեկնում Բորդո կամ Մարսել (Ֆրանսիա), հավանության արժանանում ֆրանսիական զինվորական ու քաղաքացիական հրամանատարության կողմից, հանդերձավորվում, այնուհետև ուղարկվում էին Պորտ-Սայիդ (Եգիպտոս) կամ Մոնարկա (Կիպրոս)՝ զինվելու և ամիսներով վարժանքներին մասնակցելու[35]: Այդ վայրերում էլ ձևավորվել էին 1-ին, ապա նաև՝ հիմնականում ամերիկահայերից բաղկացած 2-րդ և 3-րդ գումարտակները[36]:

Երեք գումարտակի բաժանված "Արևելյան լեգեոնի" հայկական հատվածը, հավատարիմ իր նախնիների հերոսական ոգուն և շարունակելով նրանց սկսած "Վասն Հայրենյաց" պայքարը, 1918 թ. մայիսի 26-ին՝ Վարդանանց պատերազմի պատմական օրը, Կիպրոսի վերոհիշյալ Մոնարկա վայրում փառավոր զորահանդես է անցկացրել, որին իր խրախուսիչ խոսքով ելույթ է ունեցել նաև լեգեոնի ընդհանուր հրամանատար, ֆրանսիացի գնդապետ Ռոմիեոն[37]:

Արդեն 1918 թ. կեսերին "Արևելյան լեգեոնի" կազմում հաշվվում էր շուրջ 5.500 զինվոր, որոնցից միայն 400-ն էին սիրիացի, մնացյալ 5.100-ը հայ էին: Լեգեոնի ղեկավարներից մեկի՝ ֆրանսիացի սպա Բենուա դ'Ազիի տվյալներով, կամավորների ընդհանուր թիվն ավելի մեծ էր՝ 5.662 մարդ[38]: Ժամանակակիցների գնահատմամբ՝ "Ան կրնար շուտով բարձրանալ 10000-ի եւ 20000-ի, եթէ միայն մեր "դաշնակիցները" կամենային. եթէ չդաւաճանէին…"[39]:

Կիպրոսում տաս ամիս մարզվելուց հետո՝ 1918 թ. ապրիլի 8 – մայիսի 2-ը, "Արևելյան լեգեոնն" անցել է Պորտ-Սայիդ, ապա, միավորվելով ֆրանսիական զորամասի հետ, 5.000-անոց զորաբանակով շարժվել է դեպի Սիրիա՝ թուրքական ուժերի դեմ[40]:

---

[33] *Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 354:*

[34] *Տ. Յ. Պոյաճեան. նշվ. աշխ., էջ 66:*

[35] *Նույն տեղում, էջ 10, 46:*

[36] *Օ. Թ. Մալխազունի. նշվ. աշխ., էջ 172,* Forgotten Heroes, p. 4, *Գ. Լազեան. Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 191:*

[37] *Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 355:*

[38] *Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 116:*

[39] *Յուշամատեան Մուսա Լերան, էջ 442:*

[40] *Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 355, Գ. Լազեան. Հայաստանը և Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:*

Մայիսից մինչև հուլիսի 12-ն ամերիկահայ կամավորները լեգեոնի կազմում ներգրավվել են Իսմայիլիայի զորաշարժերին, ապա 250 սիրիացու հետ անապատի միջով միացել անգլիացի գեներալ Էդմունդ Հենրի Ալենբիի հրամանատարության տակ գործող դաշնակից ուժերին՝ դիմադրելու Մուստաֆա Քեմալի զորամիավորներին[41]: Հայ կամավորների միջամտությունից ընդամենը 48 ժամ անց՝ 1918 թ. սեպտեմբերի 19-ին, հինգշաբթի առավոտյան, հաջողվել է գրավել վեց ամիս անգլիական բանակի պաշարման տակ գտնվող Նաբլուսից (Պաղեստին) հարավ՝ Արարայի բարձունքները[42]:

Այնպես որ, ամերիկահայ կամավորներն "Արևելյան լեգեոնի" իրենց քաջարի հայրենակիցների հետ լուրջ ավանդ են ներդրել Պաղեստինում՝ Արարայի անառիկ բարձունքների վրա թուրքական բանակին պարտության և նահանջի մատնելու գործում: Կատաղի կռվում "առաջին անգամ ըլլալով, Հայկական Լէգէոնի հայ կտրիճները կրակի մկրտութիւն կ'ստանան"՝ կարճ ժամանակում պարտության մատնելով Էնվեր փաշայի անխորտակելի համարվող ուժերին: Ռամկավար կուսակցության ամերիկահայ ճանաչված գործիչ Մանուկ Ճիզմեճյանն այդ մասին գրել է. "Գերմանական ու թրքական հմուտ զօրավարներէ ամրացուած այս անմատչելի ճակատը կը փշրուի ափ մը հայերու խոյանքին առջեւ, այնքան կատաղի կ'ըլլայ յարձակումը եւ այնքան մոլեգին կռիվը: … Հոն է որ երեւան կ'ելլէ հայուն անվեհերութիւնը, դիւցազնութիւնը եւ ռազմական այն յատկութիւնները, որոնք կը պանծացնեն Հայ անունը ի սփիւռս աշխարհի"[43]:

Արարայում հայ կամավորների ձեռք բերած փայլուն հաղթանակի շնորհիվ դաշնակից ուժերը հնարավորություն էին ստացել արագ ու անարգել հասնել մինչև Հալեպ, իսկ թուրքական ուժերը, ընդունելով իրենց պարտությունը, զինադադարի խնդրանք էին ներկայացրել նրանց[44]:

Դաշնակից տերություններն ու ԱՄՆ-ը, բարձր գնահատելով իրենց հանդեպ հայերի ցուցաբերած անմնացորդ նվիրվածությունը, հայ ժողովրդին համարել են իրենց "փոքրիկ դաշնակից"[45]:

Սիրիական ռազմաճակատի ընդհանուր հրամանատար, անգլիացի գեներալ Է. Հ. Ալենբին հայ ազգային հաստատություններին հղած շնորհակալական հեռագրերում իր գոհունակությունն ու հպարտությունն է արտահայտել Արարայի ճակատամարտում հայ լեգեոնականների ցուցաբերած խիզախության և անձնազոհության առիթով: Այսպես, 1918 թ. հոկտեմբերի 12-ին Փարիզի Հայ ազգային պատվիրա-

---

[41] Forgotten Heroes, p. 4, *Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 116–117:*

[42] *Ա. Թէմիրեան. Քէսապ (1909–1946), Պէյրութ, 1956, էջ 82:*

[43] *Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 355:*

[44] *Ս. Պարթեւեան. նշվ. աշխ., էջ 11–12:*

[45] *Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 357:*

կության նախագահ Պ. Նուբարին հեռագրել է. "... Ես հպարտ եմ հրամանատարութեանս տակ Հայ զօրամաս մը ունենալուս: Անոնք կռուեցան փայլուն կերպով, եւ մեծ բաժին մը ունեցան յաղթանակին մէջ"[46]: Իսկ մեկ տարի անց՝ 1919 թ. դեկտեմբերի 29-ին, Եգիպտոսի բարձր կոմիսարությանը Է. Հ. Ալենբին գրել է. "Կը ցաւիմ՝ եթէ հայերուն հերոսական կեցուածքը ըստ բաւականին չճանչցուեցաւ: Գիտեմ թէ անոնք կռուեցան վեհանձնօրէն, եւ ես հպարտ եմ զանոնք իմ հրամանատարութեանս տակ ունեցած ըլլալուս համար"[47]:

Արարայում զոհվել է 22 և վիրավորվել ավելի քան 70 հայ[48], ընդ որում ամերիկահայ լեգեոնականներից զոհվել է 3-ը և վիրավորվել՝ 14-ը[49]: Ավելի ուշ՝ 1925 թ. հոկտեմբերի 19-ին, զոհվածների աճյունները Եգիպտոսի Ռամկավար-ազատական կուսակցության նախաձեռնությամբ ու Երուսաղեմի Հայոց պատրիարքության ջանքերով Արարայից փոխադրվել են Երուսաղեմ՝ Սիոնի Հայ ազգային հանգստարան և թաղվել Անհայտ զինվորի հողակույտում, ուր կանգնեցվել է "Արարայի Հայ Քաջերուն" հիշատակը հավերժացնող հուշարձան: Հայ լեգեոնականներից շատերն արժանացել են ֆրանսիական "Մարտական խաչ" պատվանշանի, ինչպես նաև՝ ֆրանսիական բարձրաստիճան պաշտոնյաների դրվատանքին[50]:

"Արյունի" գրչանունով հեղինակը "Ուխտ մը" վերտառությամբ իր գրվածքում հետևյալ տողերն է նվիրել ամերիկահայ նահատակ չնքուշցի երեք կամավորի՝ Մ. Տեյիրմենճյանի, Մարտիրոս Պապայանի, Պողոս Տրրբքճյանի հիշատակին. "Չնքշոյ բարձրաւանդակ ու խրոխտ լեռներու ծոցին մէջ ծնած էին անոնք ու ցեղին տառապանքի ովկիանոսին մէջ՝ վրէժի ու ազատութեան սրբազան երգը երգելով ապրեցան: ... Ինչպէս առիւծ մը վանդակի մը մէջ, նոյնն էին անոնք Ամերիկայի մէջ: Հակառակ այս երկրի լայն ազատութիւններուն ու վայելքներուն, ամէն բան դժոխքի մը սարսափելի երեւոյթը ունէր իրենց համար, պարզապէս անոր համար որ խենդն էին հայրենիքին ու հոգինին կ'այրուէր վրէժխնդրութեան բոցով մը: 1917ին կամաւորական ազդանշանը աստուածային հրաման մը նկատեցին ու առաջին առիթով իսկ նետուեցան դէպի պարտականութեան դաշտը, դէպի կռիւ՝ թշնամիին դէմ դիմաց, ճակատ առ ճակատ չափուելու պողպատեայ կամքով մը: ... Անոնք, հակառակ վէրքերով պատուած՝ կռուեցան, մինչեւ որ ինկան փառաւոր ու պատուաւոր կերպով, աչքերնին յառած ցեղին ազատագրութեան արշալոյսին"[51]:

---

[46] *Ս. Պարթեւեան. նշվ. աշխ., էջ 11–12:*

[47] *Յուշամատեան Մուսա Լերան, էջ 438:*

[48] *Ս. Պարթեւեան. նշվ. աշխ., էջ 13:*

[49] *Արարա. Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին. Հրատարակութիւն Հայ Լէգէոնական Միութեան, Պոսթոն, 1923, էջ 28, Ս. Պարթեւեան. նշվ. աշխ., էջ 77–78:*

[50] *Տ. Յ. Պոյաճեան. նշվ. աշխ., էջ 148, 151, Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 357–358:*

[51] *Արարա, էջ 28:*

Այնուհետև լեգեոնականները մասնակցել են Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին. դաշնակից ուժերի հետ շարժվել դեպի Դամասկոս, Հալեպ, մինչև Պոզանթիի լեռները, ապա Պաղեստինի միջով՝ դեպի Բեյրութ, որտեղ, սիրիական զորամիավորումների անջատումով, "Արևելյան լեգեոնը" վերանվանվել է "Հայկական լեգեոնի" ("Lոgion Armոnienne")[52]*: Մեկ ամիս շարունակ զորամիավորումը գրավված է պահել Պաղեստինը, Լիբանանը:*

"Հայկական լեգեոնը" Հայոց ցեղասպանությունից ընդամենը երկու տարի անց ձևավորված առաջին զուտ հայկական զորամիավորն էր՝ աշխարհի տարբեր տեղավայրերից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Հարավային Ամերիկա, Ավստրալիա և այլն)[53] ժամանած 4.000–5.000 պանդուխտների մասնակցությամբ, արդիական բանակի կազմությամբ, ռազմամթերքով, թեև ֆրանսիական բանակին առընթեր, սակայն՝ նրանից անջատ, իր յուրահատուկ ազգային դիմագծով: Լեգեոնն իր կազմությամբ՝ բարձրաստիճան հրամանատարական կազմով, աստիճանակարգված զինվորականներով, զենքով ու զինամթերքով, ռազմական այլ հատկանիշներով և կարգապահությամբ լիովին համապատասխանում էր ժամանակի առաջավոր բանակներին[54]: Լեգեոնական լեյտենանտ Վահան Փորթուգալյանի բնորոշմամբ՝ ""Հայկական Լեգեոնը", որպես զինյալ բանակ, բառիս իրական և ամբողջական իմաստով, առաջին հայկական ռազմական ուժն էր, որը ստեղծվել էր դարեր անց պետական սկզբունքների հիման վրա"[55]: Հայ կամավորների թվի ստվարացումով՝ 1918 թ. հոկտեմբերի կեսերին, Բեյրութում Կիպրոսից ժամանած պահեստայիններից ստեղծվել է լեգեոնի 4-րդ գումարտակը[56]:

Ամերիկահայ կամավորները, որոնցից յուրաքանչյուրը մի "հոգու հատոր" ուներ թողած հայրենիքում, ամենայն պատասխանատվությամբ ու անձնվիրաբար էր մարտնչում՝ հույս փայփայելով պատերազմի ավարտին փնտրել և գտնել իրենց հարազատներին, սակայն քիչ չէին նաև իրենց բյուրավոր նահատակ ազգակիցների համար վրեժով լցվածները:

"Հայկական լեգեոնի" ղեկավարությունը կամավորներին պատգամում էր ազգային անսակարկ նվիրվածության և վերկուսակցական անխտրական պարտականությունների մասին: Այսպես, փոխհրամանատար, ամերիկահայ Ջոն Շիշմանյանը խրատել է. "Տղաք, նախ եւ առաջ պէտք է անհունօրէն հպարտ զգանք հայ ծնած ըլ-

---

[52] *Մ. Քէլէշեան. Սիս-Մատեան. Պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 592,* Forgotten Heroes, p. 7.

[53] *Տ. Յ. Պոյաճեան. նշվ. աշխ., էջ 71,* Forgotten Heroes, p. 3.

[54] *Ա. Անդրէասեան. Խոհեր գրական, ազգային եւ հասարակական, հ. Բ, Լոս Անճելիս, 1976, էջ 373:*

[55] Forgotten Heroes, p. 4.

[56] *Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 117:*

լալնուս համար: Հոգ չէ թէ բարեկամներ կամ թշնամիներ ինչպիսի համարում ունին մեր ազգին վրայ: Կը բաւէ որ մենք, իբր զինուորներ, անթերիօրէն կատարենք մեր զինուորի մեծ ու դժուարին պարտականութիւնները: Բանակին մէջ դասակարգային խրամներ պէտք չէ որ բացուին: Զինուորը որեւէ կուսակցութեան չի պատկանիր: Զինուորին կուսակցութիւնը զինք ծնող ազգն է: Զինուորը դասակարգային դրօշակ չունի եւ պէտք չէ որ ունենայ: Զինուորը առաջնորդող դրօշակը միայն եւ միայն բովանդակ ազգութեան խորհրդանիշը իր ծալքերուն մէջ խտացնող ազգային դրօշն է"[57]:

Նոր կամավորների հավաքագրման հոսքն ավարտվել է 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մեծ Բրիտանիայի և սուլթանական Թուրքիայի միջև կնքված Մուդրոսի զինադադարի արդյունքում, որով ամրագրվել է Օսմանյան կայսրության կապիտուլացիան: Նոյեմբերի 11-ին դաշնակիցները հաղթանակած են դուրս եկել պատերազմից: Զինադադարի 16-րդ հոդվածի համաձայն՝ թուրքական զորքը պետք է դուրս բերվեր Կիլիկիայից: Փոխարենը, նոյեմբերի վերջին հայ լեգեոնականների մի մասը Բեյրութից ֆրանսիական նավերով փոխադրվել է Ալեքսանդրետ, իսկ մյուս մասը դեկտեմբերի կեսին անգլիական նավերով շարժվել է դեպի Մերսին: 1918 թ. դեկտեմբերի 17–19-ին "Հայկական լեգեոնը" ոտք է դրել բաղձալի Կիլիկիա[58]:

Այդ առիթով գրող, հրապարակախոս և խմբագիր Սուրեն Պարթևյանը ողջույնի կոչ է հղել հայ քաջարի լեգեոնականներին. "... Ձեր երախտիքը չի՛ մոռցուիր, քաջորդինե՛ր, եւ լռութեան բոլոր դաւերն իսկ չե՛ն կրնար արգիլել որ Հայ Գաղափարին տաճարակիրները՝ ցեղին փառքին ու հպարտութեան համար՝ յաւէտ տարփողեն, պանծացնեն Արարան ու Հայկական Լէգէոնը: Ողջո՛յն, ձեզի՛, Հայ Լէգէոնականնե՛ր, մատա՛ղ ձեր ոտքերուն, որ հիմա Ռուբէններու, Թորոսներու, Լեւոններու հայկական հողը տիրաբար կը կոխեն՝ Տաւրոսէն Արարատ Միացեալ Հայաստանին մեծ երկունքը դղրդաւետելով"[59]:

Կիլիկիայի ազատագրումն իրականացնելու և "Կիլիկիան ամբողջութեամբ հայերուն ձգելու"[60] Սայքս-Պիկոյի ներքին պայմանավորվածության համաձայն 1918 թ. դեկտեմբերին հայ լեգեոնականներն ուղարկվել են օսմանյան տարածք՝ վերահսկելու ու պաշտպանելու ստրատեգիական հենակետերը, հայաբնակ Ադանան, Այնթապը, Մարաշը, Ուրֆան, Հաճընը և այլն: Արդյունքում, Հայոց ցեղասպանության հետևանքով Կիլիկիայից տեղահանված շուրջ 120.000 հայ վերադառնում է իր հայ-

---

[57] *Տ. Յ. Պ ո յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 88:*
[58] *Ռ. Գ. Ս ա հ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 118:*
[59] *Ս. Պ ա ր թ ե ւ ե ա ն. նշվ. աշխ., էջ 128:*
[60] *Մ. Ք է լ է շ ե ա ն. նշվ. աշխ., էջ 594:*

րենի օջախները՝ հույսով, որ անգլո-ֆրանսիական ուժերի պաշտպանության ներքո խաղաղությամբ կվերականգնեն իրենց ընդհատված կյանքը Կիլիկիայում[61]:

Այդ կապակցությամբ Մ. Տամատյանը՝ որպես Ամբողջական Հայաստանի պատվիրակության (ներառած՝ Հայաստանի Հանրապետությունը և Փարիզի Հայ ազգային պատվիրակությունը) ներկայացուցիչ, ուղարկվել է Կիլիկիա՝ ղեկավարելու "Հայկական լեգեոնի" գործունեությունը, ինչը, սակայն, շուտով բազմիցս խոչընդոտվել է ֆրանսիական իշխանությունների կողմից: Խոչընդոտներից մեկն էլ այն էր, որ թեև Մուդրոսի զինադադարի համաձայն թուրքական զորքը դուրս էր բերվում Կիլիկիայից, սակայն նահանջելիս նրանք, այնուամենայնիվ, իրենց ողջ զենքն ու զինամթերքը պետք է թողնեին մահմեդական բնակչությանը: Ֆրանսիական իշխանությունը ոչ միայն դրա դեմ միջոցներ չի գործադրել, այլև, ընդհակառակը, ընդհատել է հայ կամավորների հոսքը դեպի Կիլիկիա[62]:

Հայ կամավորները, ինչպես և նախատեսված էր, որպես քաղաքապահ զինվորներ, ձեռնամուխ են եղել տեղի հայ բնակչության կյանքի ու գույքի անվտանգությունը պաշտպանելուն, սակայն նրանց այս գործունեությունը, ֆրանսիական իշխանությունների վարած անսկզբունքային և նենգ քաղաքականության արդյունքում, կարճատև է եղել: Անգլիայի կողմից Կիլիկիայի հովանավորությունը Ֆրանսիային հետզհետե հանձնելուն զուգընթաց, վերջինս խստացրել է իր վերաբերմունքը ֆրանսիական բանակի առաջապահներ հանդիսացող հայ լեգեոնական-զինվորականների նկատմամբ: Ֆրանսիան ոչ միայն բախտի քմահաճույքին է լքել իր դրոշի ներքո արյուն ու կյանք տված հայ վիրավոր լեգեոնականներին, այլև լեգեոնը տկարացնելու միտումով նույնիսկ տարբեր պատրվակներով շուրջ մեկ տասնյակ հայ կամավորների աքսորել է Ալժիր, փոխարենը՝ Կիլիկիա տեղափոխել ալժիրցի անճար զինվորականների, ապա Կիլիկիայից հեռացրել է "Հայկական լեգեոնի" հմուտ սպաներին, ամերիկահայ հրամանատարներ Ջիմ Չանգալյանին, Ջոն Շիշմանյանին և այլոց, ինչպես նաև ազգային միությունների անդամներին: Ֆրանսիական պաշտոնական շրջանների կողմից իրականացվող այդ նոր ու բացահայտ հակահայկական գործողությունները պայմանավորված էին 1919 թ. օսմանյան քայքայված կայսրությունում սկզբնավորված և հուժկու թափ ստացած քեմալական շարժմամբ, քանի որ Առաջին աշխարհամարտից հետո Ֆրանսիան, Անգլիայի նման, սկսել էր վարել թրքամետ քաղաքականություն[63]: Կամավորական շարժման մասնակից Տ. Պոյաճյանի գնահատմամբ, "Դաշնակիցները ընդհանրապէս, իսկ "ասպետական" Ֆրանսա մասնաւորապէս, տրամադիր էին ընդունելու թրքական պա-

---

[61] Forgotten Heroes, p. 7.

[62] *Տ. Յ. Պ ո յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ XXV, Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 562, Ռ. Գ. Ս ա հ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 118:*

[63] *Մ. Գ. Ճ ի զ մ է ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 358–359, 449, 472:*

հանջներու արդարութիւնը”[64]: Արդյունքում, 1919 թ. նոյեմբերի 1-ին անգլիական, իսկ 1920 թ. հունվարի 18-ին ֆրանսիական զորամիավորումները հեռանում են Կիլիկիայից՝ հային “յանձնելով իր անագորոյն թշնամիին ձեռքը”[65]:

1920 թ. Մարաշում, Սիսում, Ադանայում, Զեյթունում, Պոզանթիում, Ուրֆայում, Այնթապում (ընդհատումներով 314 օրյա հերոսամարտ), Ֆընտրճագում, Դյորթ Յոլում, Մերսինում, Հաճընում (8-ամսյա գոյամարտ) և այլուր հայ զինվորն ու ժողովուրդը հերոսական դիմադրություն են ցույց տվել քեմալական հորդաներին: “Հայկական լեգեոնի” քաջարի մարտիկները, ովքեր նպատակադրվել էին դառնալ հայկական ինքնավար Կիլիկիայի զինվորական ուժի կորիզը, հակառակ արևմտյան հրամանատարության կողմից իրենց հանդեպ ցուցաբերած խարդախ վերաբերմունքին, շարունակել են մնալ Կիլիկիայում և Զ. Շիշմանյանի ղեկավարությամբ՝ “ուժն ու ողնայարն էին այս դիւցազնական կռիւներուն” ևս[66]:

1920 թ. օգոստոսի 10-ին Սևրի հաշտության պայմանագիրը, ըստ որի՝ Կիլիկիան հանձնվում էր Ֆրանիայի հովանավորությանը, հայերին կրկին հույս է ներշնչել Ֆրանսիայի օգնությամբ Կիլիկիայում հայկական ինքնուրույն պետություն ստեղծելու համար: Նույնիսկ նշանակվել էր կառավարիչ՝ հանձինս Միհրան Տամատյանի, որի նստավայրը լինելու էր Ադանայում: Սակայն Ֆրանսիայի մերձավորարևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցած շրջադարձի ու քեմալականների հետ մերձեցման քաղաքականության հետևանքով ֆրանսիական զինվորական իշխանությունը մեկ օր անց ցրել է հայկական այդ կառավարությունը, իսկ նույն թվականի սեպտեմբերի 27-ին լուծարել արդեն գարնանը մասնակի զինաթափման ենթարկված և հետզհետե սակավացող “Հայկական լեգեոնը” (չորս գումարտակից մնացել էր միայն մեկը. 5.000 կամավորից՝ նվազ, քան՝ 1.000): 1921 թ. սկզբին “Հայկական լեգեոնը” վերջնականապես լուծարվեց[67]:

Կիլիկիո ընդհանուր զինվորական կառավարիչ, ֆրանսիացի գնդապետ Էդուարտ Բրեմոնը վստահորեն հայտարարում էր. “Ըսէ՛ք բոլոր Հայերուն. Ֆրանսան երբէ՛ք միտք չունի Հայաստանն ու Կիլիկիան իր “գոլօնիեն դարձնելու կամ “բրոթէքթօրա”ն ընելու: Մենք միայն այդ երկիրները կազմելու եւ Հայոց յանձնելու համար հոս կուգանք”[68]: Ֆրանսիացի կառավարիչը իր սվինավոր զինվորներով անձամբ է ցրել Կիլիկիայի Հանրապետության վարչապետ Միհրան Տամատյանի կառավարությունը, որը 1920 թ. օգոստոսի 4-ին Կիլիկիան հռչակել էր թուրքական գերիշխանությունից անկախ: Կառավարությունն առաջադրվել էր հայկական կուսակցութ-

---

[64] *Տ. Յ. Պ ո յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 389:*

[65] Forgotten Heroes, p. 8; *Մ. Ք է լ է շ ե ա ն. նշվ. աշխ., էջ 594:*

[66] *Մ. Ք է լ է շ ե ա ն. նշվ. աշխ., էջ 648, Յուշամատեան Մուսա Լերան, էջ 446:*

[67] *Հայ ժողովրդի պատմություն, էջ 578, Յուշամատեան Մուսա Լերան, էջ 446:*

[68] *Ս. Պ ա ր թ ե ւ ե ա ն. նշվ. աշխ., էջ 119:*

յունների ու կրոնական հարանվանությունների կողմից և հավանության էր արժանացել Կիլիկիայի քրիստոնյա բնակչության (հայ, հույն, սիրիացի, քաղդեացի, ասորի, հակոբիկյան) կողմից[69] ՝ առ ի գործադրումն 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրի, որով Ֆրանսիան պարտավորվում էր Ասիական Թուրքիայի մաս կազմող տարածքում իր հրամանատարության տակ թուրքերի դեմ կռված հայերի հաղթանակի դեպքում նրանց համար ապահովել ֆրանսիական հոգատարության ներքո Կիլիկիայի ինքնավարությունը:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-քեմալական դաշնագրով Ֆրանսիան պաշտոնապես ամրագրել է իր նահանջը՝ Կիլիկիան թողնելով թուրքական տիրապետության ներքո[70] ՝ միաժամանակ վերջինիս տրամադրելով մեծ քանակությամբ զենք, զինամթերք հանդերձանք և այլն:

Ֆրանսիան և Արևմուտքի մյուս տերություններն անարձագանք են թողել նաև Կիլիկիայի պարպումի օրերին "Ազգային Տուն" ստեղծելու Փարիզի Հայ ազգային պատվիրակության գործադրած միջազգային ջանքերը[71]:

Կիլիկիայի պարպումը հայերին ստիպել է կրկին արտագաղթել. 120.000 հայ նավերով դիմել է անհայտ հորիզոններ: Հայ լեգեոնականներից ոմանք մնացել են Կիլիկիայում՝ օգնելու իրենց հայրենակիցներին, սակայն շատերը ետ են վերադարձել իրենց համայնքներ[72]: Լեոն այս առիթով գրել է. "Կիլիկիան դատարկվում էր հայությունից, ինչպես դատարկվել էր բուն Հայաստանը"[73]:

1922 թ. հունվարի 4-ին Կիլիկիան ամբողջությամբ պարպվել է հայությունից: Հայ լեգեոնականի գնահատմամբ՝ "Ֆրանսայի պատիւը հողին հաւասարած էր: Հայ Լէգէոնականին, հայ մարտիկին, եւ համայն հայ ժողովուրդին գերագոյն զոհողութիւնները շահագործումի առարկայ եւ դաւադրութեանց զոհ եղած էին"[74]:

Արարայի հերոսամարտից 20 տարի անց Ֆրանսիան Թուրքիային է հանձնել նաև մինչ այդ ֆրանսիական հովանավորության տակ գտնվող Կիլիկիայի վերջին պատվարը՝ Ալեքսանդրետի սանջակը[75]: 1939 թ. հուլիսի 23-ին թուրքական զորքերը մտել ու գրավել են այն և, որպես Հաթայի ինքնավար տարածք, 1–2 ամիս անց կցել Թուրքիային[76]:

---

[69] *Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 471, Յուշամատեան Մուսա Լերան, էջ 448:*

[70] Forgotten Heroes, p. 11.

[71] *Մ. Գ. Ճիզմէճեան. նշվ. աշխ., էջ 359:*

[72] *Վ. Ա. Պարսամյան, Շ. Ռ. Հարությունյան. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1979, էջ 437,* Forgotten Heroes, p. 11.

[73] *Վ. Ա. Պարսամյան, Շ. Ռ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 438:*

[74] *Տ. Յ. Պոյաճեան. նշվ. աշխ., էջ 412:*

[75] *Մ. Քէլէշեան. նշվ. աշխ., էջ 651:*

[76] *Նույն տեղում:*

Միսաք Քելեշյանի բնորոշմամբ՝ "Ֆրանսան իր վարկը կորսնցուց Արեւելքի մէջ: 1938ին Ալէքսանտրէթը թուրքերուն լքելէ վերջ, 1946ին ալ ստիպուեցան պարպել Սիւրիան և Լիբանանը շատ ամոթալի պայմաններու ներքեւ: Մե՜ղք հին ազնիւ Ֆրանսային"[77]:

Թեև Կիլիկիայի ազատագրման համար գործադրված ջանքերը վերջին հաշվով ձախողվեցին, այդուհանդերձ, անուրանալի է նաև ամերիկահայ կամավոր երիտասարդության մասնակցության նշանակությունը "Արևելյան լեգեոնի" ("Հայկական լեգեոն") ձեռք բերած մարտական հաջողությունների գործում, քանի որ նա "... չսակարկեց իր արեան գինը. կտրեց ովկէանոսը եւ մեր երէկի փառքին մէկ անկիւնը՝ Կիպրոս կղզին եղաւ անոր առաջին փորձավայրը: Հազարաւորներ գրկեցին հրացանը, եղբայրացան անոր հետ, առին վառօդին հոտը, զգացին զինուորական կարգապահութեան ծանրութիւնը, ճաշակեցին զրկանքի լեղին եւ հաղորդուեցան գոյապայքարի արիւնովը..."[78]:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի կառավարությունը, գնահատելով ամերիկահայերի նվիրվածությունը, նրանցից շատերին արժանացրել է բարձր պարգևների, շնորհել մեծ արտոնություններ ու նպաստներ: Բացի այդ, ԱՄՆ-ի բանակում ծառայած ամերիկահայ զինվորականները վերադառնալով՝ ավելի մեծ արտոնություններից են օգտվել, քան ֆրանսիական դրոշի ներքո մարտնչած ամերիկահայ լեգեոնականները, ովքեր, վերջին հաշվով, զրկվել են ամեն տեսակի նպաստներից, իրավունքներից և արտոնություններից՝ հանձնվելով բախտի քմահաճույքին: Միայն Ամերիկայի հայ ազգային միության շնորհիվ էր, որ նրանց վիրավոր ու կարիքավոր մասը ստացել է ընդհանուր առմամբ շուրջ 1.193 դոլարի օգնություն. բազմաթիվ ամերիկաբնակ կամավորների շնորհվել է միության "Պատվո վկայագիր"[79]:

Կովկասում կամավորական շարժման (1914–1916 թթ.) լուծարումից կարճ անց "Հայկական լեգեոնի" մղած հերոսական կռիվները բաղձալի երկրի ազատագրման համար Առաջին աշխարհամարտի ընթացքում հայության ունեցած թվով երկրորդ կազմակերպված զինյալ գործողությունն էր: Ամերիկահայ հրապարակախոս և ազգային գործիչ Անդրանիկ Անդրեասյանի բնութագրմամբ՝ "... ձեռնարկին քաղաքական ձախողանքը ոչի՜նչ կը պակսեցնէ Հայկական Լէգէոնի արժէքէն ու նշանակութենէն: ... Որովհետեւ անոնք (հայ լեգեոնականները – Ք. Ա.) ապրող վկաները եղան հայ մարտական ոգիին ազնուական ու խիզախ խոյացումին: Եւ նոր արժանիք ու յատկանիշ աւելցուցին հայ ազատագրական պայքարի ասպարէզին վրայ"[80]:

---

[77] *Նույն տեղում, էջ 650:*

[78] *Յուշամատեան Մեծ Եղեռնի, 1915–1965, էջ 896:*

[79] *Տ. Յ. Պ ո յ ա ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 87, Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917–1921 թթ., էջ 28:*

[80] *Ա. Ա ն դ ր է ա ս ե ա ն. նշվ. աշխ., էջ 373, 375:*

Մ. Պաղտասարյանն իր "Կամավորը" հոդվածում, հանրագումարի բերելով հայ կամավորական շարժման արդյունքները, եզրակացրել է. "... Նիւթապաշտ Եւրոպան եւ Ամերիկան, թող հաստատապէս ըմբռնեն՝ թէ օր մը այս բոլորին համար հաշիւ պիտի տան մեզի: Նահատակ Հայաստանի ազատագրութեան համար կազմակերպուած Հայ կամաւորական գունդը մոռցած չէ եւ չի կրնար մոռնալ իր Հայրենիքը եւ ազգը, զոր դաշնակիցներու էնթրիկներուն շնորհիւ քաւութեան նոխազ եղաւ*"[81]:*

Ուստի, ապագայի համար հայ կամավորի գործնական հավաքական եզրակացությունն առավել քան որոշակի է. "Ա. – Քաղաքական միացեալ ճակատ ունենալու ենք: Բ. – Հայրենիքի ազատութեան սրբազան սեղանին վրայ պէտք է զոհել բոլոր անհատական ու կուսակցական առանձին եսերն ու շահերը՝ Հայրենիքին եսն ու շահը տիրական ըլլալու համար: Գ. – Թրերամարտ կիրքերը պէտք է լռեն իսպառ: Հայրենիքին կիրքը եւ ձայնը պէտք է լսուի ամէն կողմ: Դ. – Ուժ տալ գաղութներու մէջ զինավարժութեան եւ ապագայ ազատագրական պայքարին համար հաւատարիմ, հնազանդ եւ կարգապահ զինուորեալ երիտասարդութիւն մը պատրաստել, ահաւասիկ Հայ կամաւորին իտէալը"[82]:

Այնպես որ, հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտին և հաջորդող տարիներին ամերիկահայությունը, համախմբելով իր ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական ու այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր միջոցներով սատարել է հայրենի ժողովրդի պաշտպանության, բաղձալի երկրի ազատագրության ու վերականգնման նվիրական գործին:

Այդուհանդերձ, ԱՄՆ-ի հայերի, ինչպես և ողջ հայության գործադրած բազմակողմանի ջանքերը բախվել են արևմտյան տերությունների կողմից դեռևս Առաջին աշխարհամարտով սկզբնավորված, Հայոց ցեղասպանությամբ առաջ մղված ու հետագա տարիներին հետզհետե ծավալված Մերձավոր Արևելքի գրավման աշխարհաքաղաքական մեծ ծրագրերին, խարդախ շահերին և երկդիմի խաղերին: Որպես այդ ամենի հետևանք՝ Օսմանյան կայսրությունում և ցարական Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական արմատական փոփոխություններն ու ճգնաժամային իրավիճակը, վերջին հաշվով ի դերև են արել տարբեր գաղթօջախներից, այդ թվում՝ ԱՄՆ-ից, միահամուռ կամքով և ազգային գիտակցությամբ համախմբված հազարավոր հայ կամավորների սրբազան ձգտումները՝ տարագիր հայությանը վերջնականապես ամրացնելով որդեգրած նոր երկրներին և դատապարտելով նրանց անխուսափելի ձուլման ու ուծացման:

---

[81] *Արարա, էջ 15:*

[82] *Նույն տեղում, էջ 17:*

УЧАСТИЕ И СОДЕЙСТВИЕ АРМЯН США ДОБРОВОЛЬЧЕСКОМУ ДВИЖЕНИЮ КИЛИКИЙЦЕВ (1916–1920 гг.)

(К 100-летию победы, одержанной «Армянским легионом» в Араратском сражении 1918 г.)

КНАРИК АВАКЯН

Резюме

В годы Первой мировой войны (1914–1918 гг.), равно как и в послевоенные годы, американские армяне принимали деятельное участие в добровольческом движении, организованном на Кавказе, затем в Киликии, героически сражаясь вместе с войсковыми подразделениями царской России и Франции против немецких сил, младотурок и кемалистов.

С целью организации и регулирования добровольческого движения западных армян в Киликии, возглавленного французским командованием, а также проведения иных благоприятствующих армянам мероприятий и контроля, в марте 1917 г. в Бостоне была создана первая армянская лоббистская организация в США – Армянский национальный союз Америки, состоявшая из представителей четырех политических партий (Социал-демократическая партия Гнчак, Реорганизованная гнчакская партия, Армянская революционная федерация Дашнакцутюн, Армянская конституционная партия Рамкавар), двух армянских церковных конфессий (Апостольская и Евангелическая) и Всеобщего армянского благотворительного союза. За короткий период в США было создано 187 филиалов союза.

Только за пять месяцев – с 9 июня по 3 ноября 1917 г. – с целью участия в организованном при содействии французов добровольческом движении было зарегистрировано 5000 американских армян-добровольцев, но из-за нехватки транспортных средств к движению смогли примкнуть лишь 1172 человек.

19 сентября 1918 г. героическое сражение на Араре, осуществленное армянскими добровольцами, в том числе и их соотечественниками из США, которых объединило чувство национального сознания под флагом «Армянского легиона», стало важным военным действием за освобождение желанной земли – Киликии. Однако, в силу геополитических интересов западных государств и их двуличных политических игр, сокровенные устремления и чаяния тысячи армянских добровольцев, в том числе и из США, остались нереализованными.

THE PARTICIPATION AND CONTRIBUTION OF THE USA ARMENIANS TO THE CILICIAN VOLUNTARY MOVEMENT (1916–1920)

(On the occasion of the 100th anniversary of the victory of the "Armenian Legion" at the Arara battle in 1918)

KNARIK AVAGYAN

Summary

During the years of the World War I (1914–1918) and after, the Armenian-Americans actively participated in the voluntary movements in the Caucasus and Cilicia, together with the contingents of the Tsarist Russia and France, side by side courageously fighting against German forces and the Young Turks and Kemalists.

In order to organize and regulate the voluntary movement of the Western Armenians under the French Command in Cilicia, as well as to carry out and to supervise other pro-Armenian initiatives, in March, 1917, the first Armenian lobbying organization in the US, the Armenian National Union of America was organized in Boston. It consisted of four political parties (Social-Democrat Hnchak, Reorganized Hnchak, Armenian Revolutionary Federation–Dashnaktsoutyoun, Armenian Constitutional Ramgavar Parties), two national churches (Apostolic, Evangelical) and the Armenian General Benevolent Union representatives. During a short time period, 187 branches of the Union were established the United States.

In the course of only five months, from June 9 to November 3, 1917, 5.000 Armenian-Americans were registered in order to participate in the voluntary movement launched under French protection, but due to the lack of means of transport, just 1.172 had an opportunity to leave.

In September 19, 1918, the heroic battle of Arara, given by the Armenian volunteers, as well as their compatriots from the USA, who were united under unanimous will and national consciousness under the flag of the "Armenian Legion," was a significant military action for the liberation of the desired land – Cilicia. However, colliding with the geopolitical interests and ambiguous games of the Western powers, the sacred aspirations of thousands of Armenian volunteers, including the United States, faded.